

ԲԱԺԱ ՉԵԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկար յ սաւար 12 Տր.
 Տարե ն 6
 Վեցա նայ 8
 Երեսուսն անի հաւար Տարեկան 15
 Վեցսուսնայ 8
 Եւկերիկայի հաւար Տարեկան 3
 Վեցսուսնայ 1.50
 ՎԱՆԻԿԻ ՎՃԱՐՆԵԼԻ
 Կրօնուցման տպարանի կրօնիկ հաւար 40 սանրիկ հ. իսկ վերջին երեսի հաւար 20 սանրիկ հ. երեկեան անէջի անգամներու շաւար 20 յ յ զեղջ կըլլայ:

ՇԱՐՋՈՒՄ


Նախկին և նորագոյն զրիկի
 և մարտաբանական հասցեի
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie).
 —
 Կրօնիկի և յն սրտի
 Արսասանականի ձեռնիկ
 (20 ՍԱՆՐԻՄ)
 Պուշկարի յ հաւար ձեռնիկ
 = 15 ՍԱՆՐԻՄ =

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Կ՝ ՀՐԹՏԱՐԱԿԱՆԻ ՉՈՐԻՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ՇԱՐՋՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԿՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԲ Ե ԿԱՆԿԻՆ ԿՃԱՐԷ

ՅԱՐԴՆԷՔ ԶԵՐ ԱՆՈՒՆԻՆ
ՅԱՐԴՆԷՔ ԶԵՐ ՅԵՆԱՍԱԿԻՆ



Դեռ շատ շանցաւ յուլիս 6էն առջին, հազիւ հինգ ամիս, երբ ափ մը կտրիճներ, էտիրնէի դաշտին վրայ, թուրք կառավարութեան քթին տակ, 3 — 4 վաշտ կանոնաւոր զօրքերու դէմ հերոսական կռու մղեցին ժամերով, ու յաջողեցան թշնամիէն 60—70 զոհեր խել:

Դեռ այդ կռուին մէջ ինչո՞ւ վեց հերոսներուն — Մալկարացի քաջ Խաթունին, Տրապիզոնցի Անտոնին, Ռոստոմոսի Օննիկին Սօքոլովին և Իվանին անփոխարինելի կորուստին պատճառած դառն կոկիճը թարմ է, այսօր անոնց բռնուող ընկերները — անվեհեր անմոռանալի Պետօն, քաջ Օննիկը, Մերձանովն ու Խըրիսթօն է որ կախաղան կը բարձրացնէ կարմիր գազանը:

Իսպանները դարու շէմին վըրայ գործուած աս ահաւելի ոճիրը գազանութի նները թող դիտէ եւրոպական բող դիւանագիտութիւնը, թող դիտէ ամենայն պաղարիւնութեամբ արիւնխում Մեծ—Մարդասպան Համիտին ու անոր վոհմակին գազանային հրճուանքը, թող դիտէ անոնց այլանդակ, անճոռնի «սուրաթ»ին մոլորաբ ծամածռումները, ու ի տես ատ ամենուն թող հրճուի ինքը, բող դիւանագիտութիւնն ալ:

Ձէ որ աս ամեն ոճիրները քաղաքակրթութեան արտադրած առաջդիմական պտուղներն են...

Եւ սակայն մեր նահատակ ընկերները, արհամարեցին բռնունութիւնը, ոճիրը ու կախաղանին վրայէն Թիֆլիս խրոխտաբար Համիտին ալ, դիւանագիտութեան ու իրենց քաղաքակրթութեան ալ վրայ:

Յարգա՞նք ձեզի, յարգա՞նք ձեր անունին անգին ընկերներ: Վստահ ձեր մզած կախիկն ճըշմարտութեան ու վեհաբան վըրայ:

րայ, դուք նետուեցաք վտանգին մէջ գիտակցութեամբ, համարձակ ու խիզախ, ու քաջալերեցիք ան ճամբան ուրիշ անցան սասնեակ տարիներէ ի վեր ձեր գաղափարակից հերոսները, ու մեռաք անոնց մահով:

Կախաղանի վրայէն յայտարարեցիք ի լուր աշխարհի թէ՛ միանակ չէք դուք. ձեր արիւնով ոռոգուած սրտերէն պիտի ծլին նոր դնացողներ, նոր մարդիկներ՝ որոնք լեցուած հայրենիքին, ձեր և ձեր նախորդներուն վրէժով, պիտի քալեն ձեր ետեւէն:

Ձեր մէջն են անձնուրացներ, որոնք քանի՞ քանի՞ անգամներ կռուեցան Հայաստանի հողին վըրայ, թշնամիին դէմ, ու յաղթական դուրս եկան խելով բազմաթիւ զոհեր, այսօր նոյն ատ թշնամիին, նոյն ատ բռնութեան դէմ կռուելով է որ կ'իյնաք. նորէն ճնշուած, տառապող ժողովրդի մը հողին վրայ:

Ասիկայ ձեր լայն ըմբռնումներուն, գաղափարական վեհութեան նշանն է:

Բռնութեան կատաղի թշնամիները եղաք դուք ալ. Ձգացիք իր բոլոր ահաւելի և տխուր կողմերով ցաւը, տառապանքը այն ժողովուրդին՝ որուն արժանի գաւազն եղաք. և որուն ինչքը, պատիւը օճախը ամէն օր անարգանքի ու կողոպտուի մատնուած էջուր փլաակներու տակ արիւնով ծածկուած դիակները կը հոտին: Ու ատ տառապող, Մարտիրոս ժողովուրդին ազատութեան ճամբուն վրայ զոհուեցաք:

Դուք անձնագոհ հայրենասիրութեան բարձր օրինակ մըն ալ եկաք տիւր:

Ու ժող մարտնչող մը եղաք, չը խնայեցիք ձեր կեանքը. ինկաք քաջի պէս, անգամ մըն ալ վեր հանելով բարձրութիւնը, վեհութիւնը, պատիւը այն կոկիճի զօր կը մղէ հայը, Մակեդոնացին—բռնակալութեան դէմ:

Դուք ալ կռուող ժողովուրդի մը արժանի զաւակը եղաք և

պարծանքը՝ յեզափոխութեան: Մեռաք դուք, այո՛, բայց ձեր դիակները, ձեր ոսկորները իրենց վրայ կընդունին հայրենիքին տաք համոզումները, որոնց ցոլբը անջնջելի կը մնայ:

Մեծ էք դուք. — թշնամիին գնդակներուն կուրծ առիւթ քաշաբար և մինչև վերջին շունչերնիդ կռուեցաք, կախաղանի առջև եկաք խրոխտ, ճակատաբաց, համարձակ ու տրհամարոտ շուրջեցիք ձեր պաշտելի մարմինին դպցնել թշնամիին անարգ ձեռքը, շուրջեցիք անոր ձեռքով կախուիլ նոյնիսկ ու ինքզինքնիդ կախեցիք...:

Մեծ էք դուք ձեր սրտով, ձեր զգացումներով, ձեր հայրենասիրութիւնով, զոր պսակեցիք ձեր արիւնովը: Ոչ վշտի տպաւորութեան տակ մեր բերնէն դուրս թոած քանի մը կցկտուր խօսքերը, ոչ իսկ ձեզ ներկայացնող մեծ ու փոքր կենդանագրքերը կրնան ներկայացնել ձեզ ինչ որ էք. ձեր մեծութիւնը կը զգանք միայն, չենք կրնար բացատրել:

Խող ապագայ պատմութիւնը զեանզէ ձեզ ձեր արժանի տեղը: Իսկ մենք, երկիւղածութեամբ կը խոնարհինք ձեր ոսկորներուն առջև, որոնց հանգիստ մաղթելու պէտքն անգամ չը կայ:

Յարգա՞նք ձեզի, յարգա՞նք ձեր պաշտելի յիշատակին:

գիտէն վերադարձիս երբ ժողովուրդը խմբովին եկեղեցւոյ փառոցէն դուրս կելլէր, քովս երկու հայ երիտասարդներու մէջ անցած այս խօսակցութիւնը ուշադրութիւնս գրաւեց, ու յիշեցի վերոյիշեալ թերթի 90րդ համարին մէջ նոր Ձոհեր վերնագրով տրուած այն տեղեկութիւնը թէ «Պետօն և իր ընկերները օտարին համար զոհուած են»:

Եւ անքաղաքավար համարուելու վտանգը աչքս առնելով դիմեցի ի. երիտասարդին, որ կերելի թէ այդ թերթը կարգացողներէն էր:

— Պարոն, ձեզի ո՞վ ըսաւ թէ Պետօն օտար երկրի համար զոհուեր է. գոնէ քիչ առաջ արտասանուած խօսքերէն ալ չի հասկըցաք թէ Պետօն ու իր ընկերները ուրիշ 5 պուլկար քաջերու հետ նպատակ ունէին հիանալի ծրագրով մը—որուն մանրամասնութիւնները ամեն մարդու չըսուիր—էտիրնէի ու Աքիւայի հայ և պուլկար բանտարկեալները փըրկել, եւ փրկել այն քաջերը որոնք հայկական յեղափոխութեան արիւնոտ դրօշակին տակ կռուեր ու պիտի կռուին, օտարին ծառայել ըսել չէ:

Ինձ համար սակայն ամենէն զգուշելի կէտը սա է որ գեռ մարդիկ կան որոնք յանդգնութիւնը ունին տակաւին Պետօսի փառաւոր մահէն վերջն ալ շարունակելու իրենց անճարակ ճիգերը՝ աղարտել ջանալով հայրենիքի այդ աննկուն, ճշմարիտ զինուորին համբաւը — հայ ժողովուրդին համար պաշտելի դարձած սրբութիւն մը:

Այս ըսելէս վերջը աւելորդ չեմ համարիր հրատարակութեան տալ այս առթիւ Շուճայէն բարեկամի մը ինձ գրած մասնաւոր նամակներէն սա հետեւեալ մասերը, անոր համար մանաւանդ որ անոնք իրենց մէջ կը պարունակեն վկայութիւն մը այն յերիւրուածքին դէմ, զոր նոյն այդ տաճակահոգի

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ
 ԽՐԱՌՈՒՆԷՔ ԿԱՐԿԱՅՈՂ ՆԵՐՈՒՆ

—(0)—
 Ա. — «Պէ ճանըմ», մարդիկը գացեր են իրենց ընկերները ազատելու:
 Բ. — Աղէկ «ամմա» բարեկամը, կռուր օտար հողի համար եղեր է, մեր երկրին համար չէ ելեր թերթը տառակ կրօնը:
 Կիրակի օր նման Պետօսի ե իր արժանաւոր ընկերներուն յիշատակին կատարուած հոգեհան-

գրու թիւնները խանդապատածօք
իր էջերուն մէջ հիւրընկալող
թերթը հրապարակ նետեց անց-
եալ տարի ըսելով թէ «Պետրոս
Սէրէմեան Սօփիայի զինուորա-
կան վարժարանէն վաճառուած» մըն
է .

«Շուժա 4 դեկտ. 1901
. Պետրոս Սիրէմեանը
Սօփիայի զինուորական վարժա-
րանէն իմ ընկերս էր . իր ազգին,
հայրենիքին ծառայելու տենչը
չը կրնալով զսպել՝ զոհեց ապա-
գայ . զոհեց ամէն ինչ և տարիէ
մը ձգեց վարժարանը իմ ՅՕԺԱԲ
ԿԱՄՊՅ ու գնաց Հայաստան . Ան-
շուշտ քեզի յայտնի են իր գոր-
ծունէութիւնները Վանայ կառոյ
դաշտին մէջ . Ու բազմիցս բեր-
մամբ ԳՅԻ կռուին մէջ ինք ոչ
մնալով անցաւ Սալմաստ և յետոյ
Ռուսաստան , ուր մօտ տարի մը
բանտարկուած մնաց իբրև քա-
ղաքական յանցանոր . իր ծնողքը
և ազգականները , որոնք միլիպէ
կը գանուին , հազիւ յաջողեցան
ազատել զինք բանտէն՝ տեսակ
տեսակ «տորոմէն»ներ զրկե-
լով թէ Պետրոսը պուլկարիացի
է . «ղաբասէն բոթբօրուչի»
(պահեստի սպայ) է ևն . Այսպէ-
սով ազատելէ վերջը ռուսական
բանտէ՛ վերադարձաւ Պուլկարիա .
Այս ամառ ինծի նամակով մը կա-
ռաջարկէր որ միասին Հայաստան
երթանք
Ասկէ մի քանի ամիս առաջ ի-
մօցայ թէ այս անխոնջ հայրե-
նասէրը՝ իրեն պէս քանի մը պուլ-
կար և հայ քաջերով անցեր է
էտիրնէ . սքանչելի դաւաճար
մը ի գործ դնելու
. Սակայն դժբաղդարար չը
կրնալով իրենց նպատակին հաս-

նիլ, վերադարձուց այլ ևս չընդունե-
լու պայմանաւ . որպէսզի գիտնայ
այս խեղճ խմբագիրը թէ ինչ-
պէս պէտք է յարգուին անձնուէր
յեղափոխական հերոսներ հայ
թերթերու մէջ . կը յուսանք որ
բոլոր զգայուն սրտեր պիտի հե-
տեւին մեր օրինակին՝ անարգ-
ուած նահատակներուն յիշատա-
կը պաշտպանելու համար
Պօղոս Մ. Պօյաճեան»

«Շուժա 10 դեկտ. 1901
. Երէկ հոս յետ աւարտ-
ման Սուրբ Եկեղեցւոյ այդ հե-
րոսներու անմահ յիշատակին հա-
մար հոգեհանգիստ կատարուեցաւ
և ճառարարութիւններ Եղան .
Հոգեհանգիստէն վերջ ժողովուր-
դը և երիտասարդութիւնը կար-
գալով այդ թերթի մէջ (*) տաճ-
կական գրութիւնը Ագրիանու-
պոլսոյ դէպքի մասին և խմբագ-
րին ո և է դիտողութիւն մը չը-
նելը յօգուտ «աւազակներուն» (!)
սաստիկ զայրոյթ զգաց և այդ
այլ ևս բոլորովին դար-
ձած խմբագիրը պատժելու հա-
մար այդ թերթը բոլոր բաժա-
նորդներէն հուաքելով իրեն
(*) Իրաւունքի ԳԻՂԳ . համարի մէջ
տաճկական թերթէ արատապուստ
լուրը . ուր Պետուն ու իր ընկերները
աւազակախումբի անդամներ ոճրա-
գործներ կոչուած են :

վերադարձուց այլ ևս չընդունե-
լու պայմանաւ . որպէսզի գիտնայ
այս խեղճ խմբագիրը թէ ինչ-
պէս պէտք է յարգուին անձնուէր
յեղափոխական հերոսներ հայ
թերթերու մէջ . կը յուսանք որ
բոլոր զգայուն սրտեր պիտի հե-
տեւին մեր օրինակին՝ անարգ-
ուած նահատակներուն յիշատա-
կը պաշտպանելու համար
Պօղոս Մ. Պօյաճեան»
Եւ ասիկայ ապացոյց մը չէ՞ որ
ժողովուրդը ի հարկին պիտի լաւ
ապտակել :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Յայտարարու ինք Սերիմեանի և
Արա ընկերների յիշատակը յարգող-
ներին . որ Իրաւունքի խմբագիր Յա-
կոբ Գուրպիքեան . Հ. Եփէֆիյ խեղճ
ունեցել չը յանդիմանալ իր ներկայու-
թեան արտաստուէր Ադրիանուպոլսու
նահատակութիւններ յիշատակին
կատարուած հոգեհանգիստի արտողու-
թեան նախընթաց :

ՀՈԳԵՃԱՆԳԻՍԱԸ
« Հ. Թ. ԴԱՆԵԱԿՑՈՒԹԵԱՆ Վառնայի
կոմիտէի հրապարակ հանած հայերէն
և պուլկարերէն լեզուներով աղագ-
բարութեանց համեմատ, կիրակի օր
գեկտեմբեր Գին, տեղի ունեցաւ հո-
գեհանգիստը Ագրիանուպոլսոյ մէջ
մեռնող և կախաղան հանուղ հայ և
պուլկար հերոսներու յիշատակին հա-
մար :
Ժամը Գէն արդէն Սանթրալի սրա-
հին մէջ պատրաստուած էին երիտա-
սարդներու խումբ մը Դաշնակցու-

թեան սգակիր զրօշակ առնելու դէ-
պի հայոց եկեղեցին մեծ թափօրով ,
հայ և պուլկար ժողովրդի մասնակ-
ցութեամբ Մուսալայի պողոտայէն
անցնելով . առջեւէն կերթային կար-
գաւ պատկերներ ընտղները . պսակ-
ները չորս հատ էին . Հին Հնչակեան
մասնաճիւղէն գեղեցիկ սպիտակ ծա-
ղիկներով դարդարուն պսակ մը .
երկրորդ վեր . Հնչակեան մասնաճիւ-
ղէն , երրորդ Տ. Տ. Յովհաննէս Յա-
կոբեանէ և Դ. Կողմա թոքաթիւնէ գե-
ղեցիկ կանանչ պսակ , որոնց ժապա-
ւէնին վրայ կը կարգացուէր «Ի յի-
շատակ Ագրիանուպոլսոյ նահատա-
կաց» Ուրախութեամբ կը համոզուէնք
որ այսպիսի հանրային ցարի վայր-
կեաններուն հայր կը մոռնայ ճղճիմ
հաշիւներ :

Ժամը 11 1/2 էր երբ եկեղեցւոյ ա-
բարողութիւնը վերջացաւ . Տ. Սար-
գիս Դարիպեան սրտառուջ քարոզով
մը ժողովրդին բացատրեց հերոսնե-
րուն և կոտորուածները , ու
հանդիսաւոր կերպով զօրս կը
բակր հոգեհանգստեան պաշտօնը կա-
տարելու . լազմութիւնը 2000 հո-
գիէն աւելի էր , որուն կը մասնակ-
ցէին լազմաթիւ պուլկարներ և
ներկայացուցիչներ Մակ. Կոմիտէի ,
Կիլիսալիոնի Ուսուց. խմբի , Իււնաթ-
ներու , Ընկերավարականներու , նաև
սպաներ :

Վարժարանին սանդուխին վերի
կողմը դրուած էր սեւ շաբլոնով
ծածկուած սեղան մը , որ ամբողջ
զարգարուած էր ջարդու փշուր ծաղիկ-
ներով և կանանչ շերտերով . ի փոխա-
րէն Դ. Կոմիտէի պսակին . Սեղանին
քով կանգնած էր հայաստանցի
տարագով անոյգ Մշեցի երիտասարդ
մը ձեռքին մէջ ունենալով Տիգրիս
թօժաֆճեանի նուիրած կարմիր յի-
ղափոխական դրօշակը , որուն վրայ
հասեւեալ բառերը կը կարգացուէին՝
«ՄԱՀ ԿԱՄ ԱՉՅՏՈՒԹԻՒՆ» , ինչ որ
բնաբանը եղած էր այն անմահ ,
անմահ հերոսներուն որոնք արհա-
մարհալով ամէն բան , իրենց արիւ-
նակից եղբայրները ապտակու տեն-
չով ճամբայ ելած և կախաղան հա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Հ. Թ. Դ. Վառնայի
կոմիտէի կողմէն Մու-
րաս Երանուսեանի ար-
տասանած ատր, Ասր.
Պոլսոյ հերոսներուն
համար կատարուած
հոգեհանգստի մեջ :
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ
Աղակիր ու վշտարեկ . այսօր հոս
հաւաքուած ենք վերջին յարգանքը
մատուցանելու համար այն անձնա-
զոհ քաջերու յիշատակին որոնք կա-
մովին , ինքնաբերաբար , արհամար-
հելով կեանքի բոլոր հեշտանքը ու գո-
յութեան բոլոր հրապոյրները , նետ-
ուեցան վրեժ ու պաշտելի ճամբուն
մէջ , ուր շատ քիչերու վիճակուած է
անմահանալ փառաց դափնին ժա-
ռանգելով :
Երիտասարդ , առողջ , կեանքի ա-
մենէն հեշտալիք ու խոտամտար չըր-
ջանին մէջ , թողուլ ամէն բան , տուն
սեղ . սղգական , ընտանիք , հանգիստ

ու վայելք գողափարի մը սիրուն
կուսելու , զոհուելու , մահուան գիր-
կը նետուելու համար անդիմադրելի մի
զուժ մը դգալ դէպի գերազանցօրէն
ազնիւ ու մարդկային պարտականու-
թիւնը որ կեռուզեալ սրտերուն մէջ .
ասիկայ այն հազուադիւս առաքինու-
թիւններն է , որ ամէն մարդու հա-
ւասարապէս չէ շնորհուած անխօր ,
և զոր սրտին մէջ կրող անձը , սովոր-
ակաւն միջակութիւններէ վեր , տա-
փակ ու ապուշ բուսականութենէ մը
հեռու , անմոռանալի դիւցազն մը կը
հանդիսանայ , անսպառ պաշտամունքի
առարկան այն ազգին որուն ազատա-
գրութեան գործին տխտեալ զինուորը
հանդիսացած էր , անխոնջ ախտեանը ,
անվհատ մարտնչողը :
Ահա այս զգայուն ու պաշտեցիկ
տիպարներէն էին Թաթուլ Զարման-
եան , Օննիկ Թորոսեան , Օհաննէս
Թարաքճեան , Օննիկ Տրապիզոնցի ,
ու անոնց խանդավառ ընկերը , յա-
ւէս անմոռանալի , ամենուս ծանօթ ,
ամենուս մօտիկ ու սիրելի Պետրոս
Սէրէմեանը , այն անմահ Պէտուն ո-
րուն յիշատակը այսօր ամբողջ Պուլ-
կասիոյ հայութեան համար թանկագին
է :
Այս հինգ քաջերը , իրենց պէս
անձնուրաց , իրենց պէս կարծի ու

անվեհեր հինգ պուլկար բազմակիցնե-
րու ընկերակցութեամբ , վճպեցին նետ-
ուիլ պարտականութեան փշոտ բայց
փառաւոր ճամբուն մէջ , համոզուած
ըլլալով որ տառապանքի ահաւոր դա-
ւազանը երկու բազմակից այգերու
վրայ նոյն դառնութեամբ կը ճնշէր ,
խորապէս գգացած ըլլալով որ բոնա-
կարութեան ու հարստահարութեան
լուծին տակ տաժանագին շարչկուող
թշուառ ու ընկճուած ազգութիւննե-
րը իրենց փրկութեան յոյսը պէտք է
փնտռեն իրենց անսահման ու անսպառ
եղբայրակցութեան մէջ . հայ և պուլ-
կար քաջերը ձեռք ձեռքի տուած
ինկան լուները , Հրացանը ուսին
փամփուշտի տոպրակը շալկած , եր-
կայն օրեր լեռներու մէջ թափառելէ
ետքը , մտան բռնակալին արիւնա-
ներկ ու մեռիաբոյր հողերուն սահ-
մաններէն ներս . իրենց նպատակն էր
փրկութեան գործին նուիրուած-
ները շղթաներու մահացուցիչ կա-
պանքէն , թուրք բանտերու ահաւիլ
սրբիւրէն ազատել . այն քաջերը որոնք
հեռուոր ու ամուլ անկիւններու մէջ
յաւիտենական բռնի անգործութեան
գատապարտուած էին , որոնք իրենց
եռանդոտ ու վրէժխնդիր կեանքը
պիտի փճացնէին Աքիայի ազգականիչ
միջնորդութեան տակ , զարհուրելի շղթայ-

ներու մէջ , կամ որոնք պիտի հիւճէին
մաշէին , հալէին , էտիրնէի ախտա-
ժէտ ու զարհուրալից բանտին խոնաւ
գետնախտիներուն մէջ :
Բայց սպասու . տօգոյն բախտը չի
պիտի ժպտէր այդ առիւծապիտա քա-
ջերուն , որոնք ազատութեան մղե-
զին խանդովը գիտովցած՝ արհամար-
հած էին ուժերու անհամեմատ ան-
հաւատարութիւնը և չեշտակի իրենց
նպատակին գիմելու տենչով՝ իրենց
կեանքը սուղ ծախելու միջոցները չէին
ուզած հողալ կանխաւ :
Ու ահա էտիրնէի թրքական դորա-
նցներու մօտ , կը պաշարուին բար-
նարուն բռնակալին խժգուժ գորազուն-
դերէն . տապը քաջերու գէժ ահաւոր
մարդասպանին կարմիր սարուկները կը
հրամային ամբողջ երկու դորազունը
և մէկ հեծելազունեղ զրկել : Այդ
յուզման , իրարանցումին մէջ , քա-
ջերէն երկուքը , Թաթուլ Զարմանեան
Կիլիկի Ծօթէֆ՝ գազան հեծելազոր-
քերէն հալածուած կիլիսան անոնց ձի-
բունը կոխան կըլլան , ու անմիջապէս
իրենց շուշը կը փշեն : Բայց այս
առաջին կորուստը չը յուսահատեցներ
մնացեալ ուրիշ քաջերը , որոնք հա-
կառակ իրենց աննպատ ու նոյնիսկ
վնասակար զրկելն , կը կանգնին
բարբարոս բռնակալին գէժ միջուկ մահ

ճանապարհին վերայ նահատակուողները, գոչերով ցած իջարեմից:

Յետոյ խօսեց Պալեան երիտասարդը, կարճ, կտրուկ և եռանդալից ոգով:

Երորդը ըլլալով գուրս եկամի պարզ երիտասարդ թէև խօսեց շատ կարճ, բայց նրան մէն մի խօսքը նետի պէս միտում էր մարդու սիրտը և առնում ու քշում իր հետ միասին, նա կայծակներ տեղացրեց կարմիր Ուոլթանի գլխին:

Եւ այդ որիտասարդի փայլահալից խօսքերին վերայ, ժողովուրդը կրտուլած, արհամարհելով ամէն ինչ կտրեց ու անցաւ բոլիսներ չլիթան, որ շրջապատել էին Մեծ Մարգասպանի ներկայացուցչին պաշտօնատեղին, սրուն ամբողջ ապակաթկերը գոց էին, նոյնիսկ դրան վրայ չէր փայլում թրքական զինանշան քիչ էր մնացել որ անկուսննար մի ընդհարում բոլիսներ և ժողովրդի միջև:

Մակեդոնական կոմիտէի պիւրոյին առջև էլ արտասանուեցան մի քանի բուռն խօսքեր Սուլթանի դէմ: Աւր առաջարկուեցաւ և սիրով որոշուեցաւ նահատակուող հերոսներ ծնողներին և ազգականներին ցաւակցական հեռագիրներ ուղղել:

ԱՆՈՒՇԱԻԱՆ

ՕՏԻՆՊԱՉՈՒԹԻՒՆ ՄԸ

Երէկ քրաւունքի խմբագիր Ս. Գուրպէթեան Հ. Շէֆքի իր գրաշարին ձեռքով, որբախնամի դիւանի կողմէն տպագրուած յայտարարութիւն մը զրկած էր Շարժումի խմբագրութեան արտատպելու համար:

Թերթիս խմբագիրը տեսնելով որ յայտարարութիւնը կը պարունակէ որբախնամի կիրակի օրուան ժողովին անցուդարձերուն կարագրութիւնը, որուն մէջ գանց առնուած են Հ. Շէֆքի վերաբերեալ ոչ պատուաբեր եղելութիւնները կտակածեցաւ և դիմեց Գիւանի ատենադպիրի: Արջամ Փաշաճեանի բացատրութիւն պահանջելով և նկատելով թէ ինչու կասանկ յայտարարութիւն մը ըստ սուրբականին, ձեռագրով չի զրկուիր:

Պ. Փաշաճեան շարած մնաց եւ յայտարարեց որ ինք տեղեկութիւն չունի այդ մասին, իր ստորագրութիւնը շահագործուած է, դիւանը իրօքի պրամատեր չէ եղած ատանկ յայտարարութիւն մը տպագրելու տալ:

Տպագրուած յայտարարութիւնը կը գտնուի պ. Արջամ Փա-

շաճեանի քով և ուղղները կըրնան ստուգել:

Ահա կեղծարարութիւնը Հ. Շէֆքի:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ատրիանուպոլսոյ հերոսներու յիշատակին հոգեհանգստեան պաշտօն կատարուէր է նաև Սօֆիայի ու Շուսիայի մէջ:

— Յիլիպէէն հին Հնչակեան մը կը հաղորդէ որ պուլիարներու հերոսներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնի համար պատկ նուիրող Հնչակեանները, հին հնչակեաններ են:

Նոյն անձը կը հաղորդէ որ Բարթոլոմէոս վարդապետ Պաղճեան խոչնդոտներ յարուցած է արժանաւոր հոգեհանգստեան պաշտօն մը կատարու Անգրիանուպոլսոյ նահատակներուն յիշատակին:

— Անցեալ կիրակի օրուան որբախնամի ժողովին գործադիր վարչութեան անդամները և զիւանի ատենադպիրը ձայն չեն տուած «Իրանուք» խմբագիր Յակոբ Գուրպէթեանը նոյնիսկ առժամեայ ատենապետ ընտրուելու համար:

Այդ վարմունքը պատիւ կը բերէ որբախնամի պաշտօնական մարմնին:

Շատ քիչ անդամներ ներկայ գտնուել են, և երբ ժողովի մէջ հարցուել է թէ ի՞նչու քիչ սնդամ եկած է, անդամներէն մին պատասխանած է որ Հ. Շէֆքի մը հրաւերով մարդ չի գար:

Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան պատերիակ Սահակ եպիսկոպոսը արգէն Երուսաղէմ ուղեւորուել է:

— Ինթերպուրկի հայերը 110 ոսկի զրկել են կարնոյ կարոտելոց:

— Վառնայի մէջ կարնոյ կարոտելոց համար հունգանակութիւն սկսած են, մօտ 700 ֆր. հաւաքուած է և զեռ հանգանակութիւնը կը շարունակուի:

— Վեսելո խմբին առաջարկուած է ներկայացում մը տալ ի նպաստ կարնոյ կարոտելոց, յուսով ենք որ Վեսելոն իր պարտքը պիտի կատարէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ

Կաղավարութիւնը այլ եւս զօրք չի պիտի զրկէ Թրանսիլու, որովհետեւ քանի մը տեղեր հնգ-

կացիները ապստամբելու տրամադիր են:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Ազգային ժողովը երկրորդ անգամ մերժած է փոխառութիւնը երեք քուէի առաւելութեամբ:

Նախարարութիւնը շատ զէջ վիճակի մը մէջ կը գտնուի:

ԳՈՐԾԱՐԱՆ

Լաթ ներկելու և քիմիապէս մաքրելու:

Վ. Ե ԹՕՅԻԼՕՊ

ԵՒ

ԽՂ. Մ. ԻՕԲՈՅ

ԲՈՒՍԱՌԲ

Սոյն գործարանի մասնաճիւղը որուն կառավարիչն է Բէթր ԿԼՈՒՇԿՕՅ «Իլլյուստրիկ» խմբագիրը, քաղաքային պարտէզին դիմացը:

Կը ներկէ կանանց և մանկական զգեստներ, մետաքսէ, բրդէ և բամբակէ գործուած քներ, նոյնպէս վաճառականական ապրանքներ ու մանուածքներ: Ներկը չի թափիր, միայն ներկելու տալիք նիւթերը մաշած չի պիտի ըլլան:

Գիները չափաւոր են:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ և ՆՈՐԺՈՒՄ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցէատման, նամակագրութեան, հարսանեկան հրատրագիր, մահազդ:

Գիները յոյժ գիւրամատչելի:

Աւրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՆԻՍԻ՛

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայղելիքով հիմնուել է մի գրադարան, որ նպատակ է դրել ծանօթացնել արտասահմանի հայ ուսանողութեան եւ ընդհանրապէս հետաքրքրող անձանց հայոց ներկայ կեանքին վերաբերեալ հայերէն եւ օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ: Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համեմատ թիւ որի համար յայտնում ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը եւ խնդրում ենք այն անձանց հատուտութիւններին, որոնք կամենում են գրքերով եւ զգիրատուութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին ուղարկել հետեւեալ հասցէով:

A. Iohannessian Heidelberg Kaiser 31 № 5

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ գիմում ընելու համար պէտք է գրմել հետեւեալ հասցէով: Իւնիոն Տէ Զ'Եղիսիան Արմ. Լ'Եօրոք Բիւ Տը Լ'Եֆօլ Տը Շիւի 2

Սուխ ժընէվ Կարգոյի Թանճաճողով

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յիլիպէի «Հայկական երգեցիկ խումբ»-ը սա շրջանին մէջ վերսկսած ըլլալով արգէն իր պարտաւորները, ձեռնարկած է նաև պարբերաբար հրատարակելու եւրոպական ձայնագրութեամբ հայկական հին եւ նոր քառաձայն երգեր, մաքուր թղթի վրայ, յստակ վիճագիր:

Այո առթիւ երգեցիկ խումբի վարչութիւնը ներկայիս կը յայտնէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտասէր հայ երիտասարդութեան, որ եթէ առ երգերէն փոփոգողներ կան, հաճին դիմել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով դիմել թուղթին համար 20 սանթիմ. փոստի ծախսը մեր վրայ, կան երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղկանան:

Արտասահմանի համար 35 սնթ. Յիլիպէ վարչ. «Հայկ. երգեցիկ խումբ»:

Հասցէ՝ Agop Sivadjian Philippople

ԱՉԻ

Բաղէչի կուսակալութեան պատկանեալ Յուրգափի գիւղէն Պէկօ Ասատուրեանի, հաստատակալ շէկ պէխով ու յօնքերով, ճամբսէն ի վեր ուր լինելն անյայտ է զայն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը միթաբել հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով:

ԿԱՂԱՆԴՉԻ

Նոր լոյս տեսաւ այս գրկոյքը արձակ և ոտանաւոր:

Հեղինակը զայն գրչի պրօսանք անուանած է, և իրաւ ալ գրչի պրօսանք է:

Գինն է 40 սնթ. կը ծախուի վարնայի մէջ Զարպհանէլեան գրատունը:

Отговорникъ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна